ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

(ՅՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ)

27 Յունիսի. Սինոդը հրամայեց Երևանայ Կոնսիստորեային, պատուիրել Հոգևոր կառավարութեանց և գործակալների միջոցաւ բոլոր քահանաներին՝ որ նոքա, առանց զանցառութեան ձրիապէս գործակցեն մարդահամար կազմողներին, հաղորդելով հարկաւոր տեղեկութիւնները. Սինոդը պարտաւորեց Կոնսիստորեային՝ որ եթէ եկեղեցիներում՝ չը գտնուին չափաբերական տոմարների սևերը, Կոնսիստորի դիւանում եղած չափաբերականներից քաղուածներ տայ։

—

18 Յունիսի. Սինոդը ինկատի ունենալով Գիւնէյ-Ճարտար գիւղի Մարգարէ քահանայ Վարդապետեանցի թախանձագին աղերսանքը առ Վեհափառ Հայրապետն և ծերութիւնը, ըստ մակագրութեան Վեհափառ Կաթուղիկոսի՝ որոշեց Սևան ուղարկելու փոխանակ յիշեալ քահանային միայն տեղւոյն եկեղեցւոյ դրանը ցմահ ապաշխարեցնելով բաւականանալ։

—

16 Յունիսի. Սինոդը վաւերացրեց Թիֆլիզի Կոնսիստորեայի վճիռը, որով Քարվանսարայի Ղուկաս քահանայ Սիմէօնեանցը ենթարկվում է վեց ամսեայ եկեղեցական ապաշխարանքի, չը հասական աստիճանում պսակ կատարելուն համար առանց օրինական թոյլտուութեան։

—

14 Մայիսի. Սինոդը ինկատի ունենալով Խաչերեսեան Յարութիւն քահանայի աղերսագիրն առ Վեհափառ Հայրապետն, ըստ մակագրութեան Նորին Վեհափառութեան, յիշեալ քահանային արձակեց ապաշխարութիւնից, թոյլ տալով քահանայագործութիւն անել և զգուշացնելով՝ որ այսուհետև իր կոչման դէմ բան չանէ։ Սինոդը իր այս տնօրէնութեան մասին տեղեկութիւն տուեց Սևանայ վանահօրը և Աստրախանի Կոնսիստորեային։

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Մայր Աթոռոյս ձեռնարանի վարչութիւնը ծանուցանում է ի գիտութիւն հասարակաց իր հետև եղած տնօրէնութիւնները։

Ա. Այս տարի ձեռնարանում աշակերտաց սահմանեալ թիւը լրացած լինելով նոր աշակերտաց ընդունելութիւն չի լինիլ բնաւ։

Բ. Ձեռնարանը այսուհետև երբեմն աշակերտ ունենալու չէ բնաւ։